

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2007 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 27-Ի N 1587-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

ՈՐՈՇՈՒՄ

\_\_\_\_\_ 2022 թվականի N \_\_\_\_ Ն

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2007 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 27-Ի N 1587-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով  Նորմատիվ իրավական ակտերի մասին<sup>1</sup> օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածներով՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը **որոշում է**.

1. Հայաստանի Հանրապետության կառավարության 2007 թվականի դեկտեմբերի 27-ի «Հայաստանի Հանրապետության տարածքից ավտոմոբիլային տրանսպորտով ուղևորների և ուղեբեռների միջպետական փոխադրումների իրականացման կարգը հաստատելու մասին» N 1587-Ն որոշման (այսուհետ՝ որոշում) մեջ կատարել հետևյալ փոփոխությունները՝

1) որոշման հավելվածի 17-րդ կետի 8-րդ ենթակետում և Ձև 6-ի վերնագրում  կազմակերպության<sup>2</sup> բառը փոխարինել  փոխադրող<sup>3</sup> բառով.

2) 26-րդ կետում  իրավաբանական անձինք և անհատ ձեռնարկատերերը<sup>4</sup> բառերը փոխարինել  փոխադրողներ<sup>5</sup> բառով.

3) 27-րդ կետում  կազմակերպություն կամ անհատ ձեռնարկատեր<sup>6</sup> բառերը փոխարինել  փոխադրող<sup>7</sup> բառով.

4) 30-րդ կետը շարադրել նոր խմբագրությամբ.

30. Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով տեխնիկական գնություն անցած չլինելու դեպքում տրանսպորտային միջոցն ստանում է «0» գնահատական և հանվում մրցույթից:<sup>8</sup>

5) 33-րդ կետում, 35-րդ կետի 2-րդ ենթակետում և 40-րդ կետում  կազմակերպությունը<sup>9</sup> բառը փոխարինել  փոխադրողը<sup>10</sup> բառով.

6) 36.1-րդ կետում (բացառությամբ միջպետական, միջմարզային, ներմարզային, ներքաղաքային (բացառությամբ Երևան քաղաքի) երթուղիներով փոխադրումներ իրականացնող փոխադրողների, որոնք «Պետական տուրքի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով արդեն իսկ վճարել են պետական տուրքը)՝ բառերը և «Պետական տուրքը հաջորդող յուրաքանչյուր տարվա համար վճարվում է ոչ ուշ, քան առաջին տարվա համար պետական տուրքի վճարման ամսաթիվը՝ նախադասությունը հանել.

6) 48-րդ կետում և Ձև 2-ի աղյուսակում «կազմակերպությանը» բառը փոխարինել «փոխադրողին» բառով.

7) Ձև 1-ի վերնագրում և տեքստում, Ձև 2-ի և Ձև 3-ի վերնագրերում, Ձև 10-ի աղյուսակի առաջին սյունակում «կազմակերպությունների» բառը փոխարինել «փոխադրողների» բառով.

8) Ձև 1-ի ցանկի 6-րդ կետում «փակ ծրարով ներկայացվող» բառերը հանել.

9) Ձև 1-ի ցանկը լրացնել նոր 8-րդ կետով հետևյալ բովանդակությամբ.

«8) պարիտետ կողմի փոխադրողի հետ կնքված նախնական պայմանագիրը:»

10) Ձև 3-ի աղյուսակի 3-րդ կետի 7-րդ և 8-րդ ենթակետերում «Ճանութագրություններ» սյունակում «նախկինում փոխադրող չհանդիսացող հայտատուն» բառերը փոխարինել «վերջին մեկ տարվա ընթացքում միջպետական կանոնավոր ուղևորափոխադրում չիրականացրած փոխադրողը» բառերով.

11) Ձև 9-ի վերնագրում «փոխադրող կազմակերպությունների» բառերը փոխարինել «փոխադրողների» բառով.

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

**Հայաստանի Հանրապետության  
վարչապետ  
Փաշինյան**

**Ն.**